

ՊԱՆԴԻՏԻ ԵՐԳԸ

(Նմանողուժիւն ժողովրդականին)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Մատաղ լինիմ ձեզ, իմ որդի՛ք սիրական,
Ես անխնայ ձեզ մեն-մենակ թողեցի.
Խելքս առել ու տարել էր սատանան.
Խենթի նրման կանաչ դրախտը ձրգեցի:
Մի օր ես էլ նամուս, պատիւ ունէի.
Գոնէ ձեզ մօտ դէմքս պարզ էր ու պայծառ.
Թողի թէ չէ մեր երկիրը պապերի,
Լուս-աշխարհը դառաւ խաւար ինձ համար:
Էս քարուքանդ ողջ քաղաքում չը տեսայ
Գոնէ մէկին, որ ունենար խղճմտանք,
Սև օրերս քաշ եմ տալիս աղամայ.
Ողջի համար դառել եմ ծաղր ու ծանակ:

Մատաղ լինիմ պաղ աղբիւրիս ջրերին,
Նրա մարգարիտ կաթիլներին ես մեռնիմ.
Եարաբ, Աստուած, կ'արժանափցնես ինձ կրկին,
Որ մուրազիս, իմ մուրազիս ես հասնիմ:
Եարաբ նորից կը տեսնեմ իմ դերդաստան
Ու ցաւերս իմ սրբոհցս կը հեռանան...
Ա՛խ, թէ մին էլ Աստածածնայ սեղանին
Ես չօքէչօք մօմը ձեռիս մօտենամ

Ու Տիրամօր սուրբ պատկերի առաջին
 Արտասուքովս ես գետինը լրւանամ,—
 Ենժամ էլ հեջ դարդ չի մընալ իմ սըրտում.
 Տէ՛ր երկնային, Քե՛զ եմ խընդրում, պաղատում...

Կոտըրէին իմ ոտները, սիրելի՛ք,
 Որ ձեզ անտէր, անտէրական չ'անէի.
 Քօռանային իմ աչքերըն, իմ օրդի՛ք,
 Որ իմ եկած սև ճամբսն չը ջոկէի:
 Բեռնաւոր եմ, չեմ վաստըկիլ կըրելուց.
 Բեռան տակին միտք եմ անում ձեզ համար.
 Օր ու գիշեր ձեր կարօտը քաշելուց՝
 Ես հալ ու մաշ էլալ, դառալ խելագար:
 Սպասելուց ջուր կտրեցին ձեր աչքեր.
 Ձեր աչքերին, օրդի՛ք, լինիմ ես ղուրբան.
 Տէ՛ր, Դո՛ւ լըսես իմ աղաչանք, աղօթքներ,
 Ինձ խընայե՛ս, արժանացնե՛ս ինձ իմ տան:

Թիֆլիս, 1888 թ., 7 յուլիսի: